

На основе сделанных выводов и предложений выведены основные течения экономической науки второй половины XX века.

## THE MAIN DIRECTIONS OF ECONOMIC THEORY OF THE XX CENTURY

*S. G. Amirkhanyan*

Since the midst of the XX century up to the 80ies the western economic science paid more attention to the issue of social nature in order to ground the existence of developing economic situation with the help of market and governmental regulating measures. The main directions and trends of economic science of the second half of the XX century are pointed out and a set of conclusions and suggestions are made in the given paper.

## ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍՎՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ: ՀՀ 2012-2014 ԹԹ. ՄԻՋԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍՎՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

**Ս. Գ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,

գՊՀ պրֆեսոր

**Ն. Յ. ՕՉԱՆՅԱՆ**

գՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող

Ինչպես աշխարհի բոլոր մյուս պետություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեի նախագիծը մշակվում է մեկ տարվա կտրվածքով, սակայն միայն պետության կողմից կատարվող ծախսերի ննան կարծաժամկետ պլանավորմամբ հնարավոր չէ ապահովել երկրի տնտեսության դիմանիկ զարգացում և կայուն տնտեսական աճ: Որպես այս հարցի լուծում՝ միջազգային ասպարեզում արդեն երկար տարիներ շարունակ պետություններն իրենց ծախսային քաղաքականության մեջ լայնորեն կիրառում են ծրագրային բյուջետավորումն ու պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերը:

«Ծրագրային բյուջետավորում» հասկացությունն առաջ է եկել 1950-60-ական թթ. ԱՄՆ-ում: Բյուջետային համակարգի վերաբերյալ այս նոր մոտեցումն, իհարկե, չէր ենթադրում ծախսերի բովանդակության կամ պետական քաղաքականության փոփոխություն, բայց, այնուամենայնիվ, պահանջում էր արմատական բարեփոխումներ պետական ֆինանսների կառավարման բնագավառում:

Առաջին անգամ այն կիրառվեց Նոր Զելանդիայում և մեծ հաջողություն ունեցավ: Այնուհետև բյուջետային ծախսերի դասակարգման այս եղանակն արագ տարածում գտավ նաև մի շարք այլ երկրներում: Այսօր այն կիրառվում է աշխարհի գրեթե բոլոր զարգացած երկրներում և զարգացող երկրների մեծ մասում, սակայն համաշխարհային պրակտիկայում այդ գործում բարձր է զնահատվում

հատկապես Նոր Զելանդիայի և Ավստրալիայի ունեցած փորձը:


Ծրագրային բյուջետավորման հիմնական հատկանիշներից է պետական ծախսերի հաշվին մատուցվող ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների գործունեության արդյունքների ոչ ֆինանսական ցուցանիշները նույնագան կարևոր են համարվում, որքան և ֆինանսականը: Այդ է պատճառը, որ հաճախ ծրագրային բյուջետավորումը անվանում են նաև «արդյունքների վրա հիմնված բյուջետավորում» (Performance-based budgeting): Արդյունքների վրա հիմնված բյուջետավորման գլխավոր նպատակը կատարված ծախսերի արդյունավետությունն է: Այս դեպքում հիմնական շեշտադրումը բյուջեում «ի՞նչ ռեսուրսներ են հարկավոր պետական մարմիններին» հարցից տեղափոխվում է «ի՞նչ է մատակարարվում հանրությանը (որքա՞ն և ի՞նչ որակով)» հարցին [4]:

Ծրագրային բյուջետավորման առանցքը պետական ծախսային քաղաքականությանը նպատակայնություն հաղորդող պետական ծախսային ծրագրերն են [5]: Այդ ծրագրերի միջոցով պետությունը սահմանում է առաջիկա տարիների ռազմավարությունը: Ընդ որում՝ ծրագրային բյուջետավորումը նպաստում է, որ միջնաժամկետ ծախսային ծրագիրն ու բյուջեն կատարվեն ըստ պլանավորվածի:

Պետական ծախսային ծրագրերի կիրառումը ենթադրում է պետության կողմից կատարվող ծախսերի համեմատաբար ավելի երկար ժամանակով պլանավորում՝ ըստ պետության հիմնական ռազմավարական ուղղությունների՝ երկրի տնտեսական զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծախսային ծրագրերի կազմման միջոցով, որոնք հիմք են ծառայում համապատասխան ժամանակաշրջանի պետական բյուջեների նախագծերը կազմելու համար: Այդ ծրագրերը հանդիսանում են բյուջետային գործընթացի անբաժանելի մաս և մեծ նշանակություն ունեն ծրագրային բյուջետավորման շրջանակներում իրականացվող միջոցառումների շարքում:

Մեր հանրապետությունում ծրագրային բյուջետավորման ներդրմանն ուղղված բարեփոխումները սկսվել են դեռևս 2004 թվականից: ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցառումների շրջանակներում 2004-2008 թթ. իրականացվել են մեծածավալ աշխատանքներ, որոնց արդյունքը եղավ այն, որ 2008 թ. հոկտեմբերի 30-ին կառավարության N 1207-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի կայուն զարգացման ծրագիրը, որն իրենից ներկայացնում է Հայաստանի 2009-2021 թթ. զարգացման հեռանկարներն ու նպատակները: Կատարված բարեփոխումներից կարելի է առանձնացնել հատկապես պետական բյուջեի դասակարգման համապատասխանեցումը միջազգային GFSM ստանդարտներին, ինչպես նաև միջնաժամկետ ծախսային ծրագրերի և քաղաքացիական ծառայության համակարգերի ներդրումը:

**ՀՅ բյուջետային համակարգը՝ ծրագրային բյուջետավորման և միջնաժամկետ ծախսային ծրագրերի կիրառմամբ**



Պետական ծախսային ծրագրերը կառավարության համար ոչ միայն ինքնանպատակ չեն, այլ նաև հանդիսանում են պետության նպատակների իրագործման հիմնական գործիքներից մեկը, ընդ որում միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման գործընթացը համակարգվում է ՀՅ վարչապետի դեկավարությամբ գործող համապատասխան մարմնի՝ ՀՅ միջնաժամկետ ծախսային ծրագրի մըշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից:

Միջնաժամկետ ծախսային ծրագրի մշակման հիմքում ընկած են երկրի տընտեսության վերաբերյալ առաջիկա տարիների մասին ՀՅ ֆինանսների նախարարության և կենտրոնական բանկի կողմից կատարված մակրոտնտեսական կանխատեսումները՝ ըստ տնտեսագիտական վեց հիմնական բնութագրիչների՝

- համախառն առաջարկ՝ ՀՆԱ իրական աճ,
- համախառն պահանջարկ՝ սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ,
- գնային փոփոխականներ՝ ՀՆԱ դեֆյատոր, գնաճ, ՍԳԻ,
- ֆինանսական համակարգի խորություն՝ փողի զանգված/ՀՆԱ,
- առևտրային հաշվեկշիռ,
- պետական հատվածի դերը տնտեսությունում՝ պետական ծախսեր/ՀՆԱ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հայաստանյան տնտեսությունում առկա ցուցանիշները, ինչպես նաև 2012-2014 թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագրի հիմքում ընկած կանխատեսումները այդ տարիների վերաբերյալ:

**Աղյուսակ 1.**

**2012-2014 թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագրի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչները [1]**

Չափորոշիչ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	Փաստ	Փաստ	Փաստ	Փաստ	Փաստ	Ծրագիր	Պլան	Պլան
Տնտեսական աճ (ՑՆԱ % փոփոխություն)	13.7	6.9	-14.1	2.1	4.6	4.2	4.5	4.8
Սպառման մակարդակ (Սպառում/ՑՆԱ %)	81.8	81.8	93.7	94.0	93.3	92.4	91.3	90.3
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՑՆԱ %)	37.8	40.9	34.7	33.4	31.0	31.0	30.8	30.3
ՑՆԱ դեֆլյատոր	104.2	105.9	102.6	109.2	105.7	104.6	103.8	103.7
Գնաճ միջին	4.4	9.0	3.4	8.2	8.2	5.5	4.3	3.9
Բանկային հանձնարարի ներգրավվածություն (փողի զանգված/ՑՆԱ %)	22	19.8	26.3	26.3	26.8	27.2	27.4	27.5
Ընթացիկ հաշիվ/ՑՆԱ %	-6.4	-11.8	-15.8	-13.9	-11.1	-10.2	-8.9	-7.5
1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը դրամով	342.08	305.97	363.3	373.66	357.98	369.93	369.93	369.93

Ինչպես երևում է այսուսակից՝ առաջիկա տարիների ընթացքում մեր երկրում սպասվում է համախառն ներքին արդյունքի ոչ այնքան մեծ, սակայն կայուն աճ՝ համապատասխանաբար 4.2 %, 4.5 %, 4.8 %: Ըստ այդմ 2012 թվականի 4,218.6 մլրդ դրամի փոխարեն 2014 թվականին անվանական ՑՆԱ-ն կկազմի 4,967.5 մլրդ դրամ՝ գրանցելով 17.75 % աճ 2012 թ. նկատմամբ:

Գաղտնիք չէ, որ ՀՀ պետական բյուջեի մուտքերի շուրջ 80%-ը ստացվում է բացառապես հարկային եկամուտներից: Այդ տեսանկյունից կարևոր է հատկապես պետության կողմից սահմանված հարկատեսակների գծով պետքութեի մուտքերի ավելացումը: Ըստ այդմ 2012-2014 թթ. պետական եկամուտների բաղաքանությունը իրականացվելու է հետևյալ սկզբունքներին համապատասխան՝

- հարկային եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացում,
- պետքութեի՝ արտաքին ֆինանսավորման աղբյուրներից կախվածության նվազեցում,
- հարկային և մաքսային օրենսդրության կատարելագործում,
- տնտեսության ստվերային հատվածի կրծատում:

2012-2014 թթ. ընթացքում նախատեսվում են ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացմանն ուղղված լայնածավալ միջոցառումներ, մասնավորապես՝ օրենսդրական բարեփոխումներ, պետական հարկային և մաքսային հսկողության բարձրացում, ինստիտուցիոնալ բարեփոխումներ պետական մարմիններում և այլն: Այդ բարեփոխումների շրջանակներում արդեն իսկ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են պետական բյուջեի եկամուտների ավելացման ուղղված մի շարք օրենքներ: Այդ ամենի շնորհիվ 2012, 2013 և 2014 թվականներին կանխատեսվում է պետական բյուջեի եկամուտների զգալի աճ՝ համապատասխանաբար 6.9 %, 7.5 %, 10.2 % չափով:

**Աղյուսակ 2.**

**ՀՅ պետական բյուջեն 2007-2014 թթ. (մլրդ դրամ)**

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	Փաստ	Փաստ	Փաստ	Փաստ	Փաստ	Ծրագիր	Պլան	Պլան
Եկամուտների գծով	504.8	746.0	905.4	742.1	852.4	911.6	979.8	1079.8
Ծախսների գծով	573.3	822.0	945.4	935.2	1001.0	1044.1	1087.8	1197.8
Ղեֆիցիտը	68.5	76.0	40.0	193.4	14.6	132.5	108.0	118.0

Պետական բյուջեի ինչպես հարկային, այնպես էլ այլ եկամուտների ավելացման շնորհիվ նախատեսվում է կրծատել բյուջետային դեֆիցիտի չափը՝ այն 2012 թվականին գրանցված 132.5 մլրդ դրամից նվազեցնելով մինչև 118.0 մլրդ դրամ:

Դարձ է նշել, որ տնտեսության վերաբերյալ ՀՅ 2012-2014 թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագրում տեղ գտած կանխատեսումները կատարվել են դեռևս 2011թ.՝ այն ժամանակ, երբ 1 ԱՄՆ դոլարի դիմաց ՀՅ դրամի միջին տարեկան փոխարժեքը 2010թ. տվյալներով կազմել էր 373.66 դրամ, իսկ ընթացիկ (2011թ.) և հաջորդ (2012թ. և հետո) տարիների համար կանխատեսվում էին համապատասխանաբար փոխարժեքի 357.98 դրամ և 369.93 դրամ ցուցանիշները: Մինչդեռ հայկական դրամի արժեզրկումը ամերիկյան դոլարի նկատմամբ, որը ցածր տեմպերով վկայել էր դեռևս 2011 թվականից (ՀՅ դրամի արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2011թ. ընթացքում կազմել է 6.15%, իսկ միայն 2012թ. հունվար-հունիսին՝ 8.35%), չի կարող իր ազդեցությունը չունենալ ՀՅ տնտեսության, ինչպես նաև վերը նշված մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Հայաստանի Հանրապետության 2012-2014 թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագիր, Երևան, 2011:
2. Հայաստանի Հանրապետության Կայուն զարգացման ծրագիր, Երևան, 2008:
3. Հայաստանի Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», Երևան, 1997:
4. Ծրագրային բյուջետավորման բարեփոխումները Հայաստանում, Երևան, 2008:
5. GTZ ծրագրի մասին, Երևան, 2008:
6. <http://www.mminfin.am>:
7. A Basic Model of Performance-Based Budgeting, International Monetary Fund, 2009.
8. Performance based budgeting in OECD countries, OECD Journal on Budgeting, 2007.

## **СРЕДНЕСРОЧНЫЕ ПРОГРАММЫ ГОСУДАРСТВЕННЫХ РАСХОДОВ: О СРЕДНЕСРОЧНОЙ ПРОГРАММЕ ГОСУДАРСТВЕННЫХ РАСХОДОВ РА ЗА 2012-2014 ГГ.**

**C. Г. Амирханян  
Н. Г. Оганян**

Статья посвящена пояснению среднесрочной программы государственных расходов за 2012-2014 гг. РА и выяснению роли и назначения среднесрочных программ государственных расходов в государственной политике. Представлены прогнозы Министерства финансов и Центрального банка РА по развитию экономики Армении в течение 2012-2014 гг. в качестве основных макроэкономических индексов. В статье подчеркнуты именно прогнозы о доходах, расходах и величин дефицита в государственных бюджетах за указанные годы.

## **MEDIUM-TERM EXPENDITURE FRAMEWORKS. ABOUT THE 2012-2014 MEDIUM-TERM EXPENDITURE FRAMEWORK OF RA**

**S. G. Amirkhanyan  
N. H. Ohanyan**

This article is devoted to the explanation of 2012-2014 Medium-Term Public Expenditure Framework and generally to the clarifying the role and the significance of medium-term public expenditure frameworks in state policy. The forecasts performed by Ministry of Finance and Central Bank of RA about developing the economy of Armenia during 2012-2014 are introduced here, that are presented in the form of the basic macroeconomical indexes. The article also underlines the prevision revenues, expenditure and the measure of deficit of the government budgets during those years.

## **ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

**Մ. Ն. ՋԵՂԳՆՅԱՆ  
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Ա. Մ. ՍԱՆՈՒԿՅԱՆ  
ԳՊՀ մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող**

Շուկայական տնտեսության պայմաններում բանկային գործունեության կազմարման գործընթացում կարևորվում է ռիսկերի կառավարումը: Ռիսկի կառավարումը բանկային գործունեության ռազմավարության մշակման և իրականացման գործընթաց է, որն հանդիսանում է առևտուրային բանկերի կառավարման, նպատակներին հասնելու համար իրատեսական պլանների մշակման բաղկացուցիչ մաս: Հայաստանի Հանրապետությունում բանկերն իրենց գործունեության ընթացքում բախվում են բազմատեսակ ռիսկերի հետ, որոնց նկատմամբ